

187. անոնց վնասակաց տրեւց; Անոնց պատերազմոյնները սպաննեցի, անոնցմէ բռնած գերիներս առի տարի:

Բարձրաքանդակին արձանագրութիւնն:

Ա. «Կիրդանացի Սուպի տուրքը՝ արծաթ, ոսկի, անագ, պղնձի անոթներ, գաւաթներ (°), թագաւորին դանձը, ձիեր, երկսպաստ ուղտեր րնդունեցայ»:

Մննարարին արձանագրութիւնն¹:

- Սէ-Ն. Ա. 1.
5. Սաղմոնաւոր բազմութեանց ժողովրդոց թագաւոր
14. թագաւորութեան սկիզբն, կառավարութեան առաջին տարին²
15. արքայական գահոյ վրայ մեծփայլութեամբ նստայ. պատերազմիկ կառքեր եւ զօրք դաւմարցի, Սիմիտ երկրին կռճին մէջ մխեցայ, յԱրիդի³ ի բեքդարաւցան
16. յիննիի մօտեցայ, քաղաք յարձակմամբ առի. անոր տիրեցի, անոր բազմութիւ պատերազմողները սպաննեցի, անոր արջառն առի տարի: Անոր քաղաքին գիմացը կառափուկքէ կոթող մը կառուցի:
17. անոնց մանչ ու աղջիկ աղլոցը խարուկի մէջ սայրեցի: Մինչդեռ անոնք տակաւին Արիդիի մէջ Կր կենային, զՏարին (երկիր) խարդացւոյն, (երկիր) խարմասացւոյն
18. (երկիր) Սիմիտացւոյն, (երկիր) Սիմիրացւոյն, (երկիր) Սիրիացւոյն⁴ եւ (երկիր) Ուլմանիացւոյն՝ ձիեր, չարկէք ձիոց, արջառ, ոչխարներ, գինի՝ ընդունեցայ: Արիդիէն
19. ելայ. սեպ նուրբ շաւղիներ, դժուարին լեռներ՝ որոնք երկաթի գաշունի մը սայրին պէս զէպ յերկինս վեր կանգնուած են, պղնձի եւ անագապղնձի թիւրով խորեպ պեղեցի, կառքերուն
20. եւ զօրքին քալել տուի: Խուբուսկիա քաղաքին մօտեցայ, Խուբուսկիա քաղաքն եւ իւր վնասակէն 100 քաղաք Տրով պրեցի: Կակիա

21. Նաիրիի՝ Թագաւորն՝ եւ իւր զօրոց մնացորդներն զինուց սասակութենէն զարհուրեցան եւ ահագին լեռներ բռնեցին: Անոնց ետեւէն լեռներուն վրայ ելայ
22. լեռանց մէջ անոնց հետ սաստիկ ճակատամարտ տուի. անոնց վրայ յաղթութիւն կատարեցին: Լեռներէն կառքեր, զօրքեր, ձիեր, ձիերու հարկէք առի տարի: Սարապին վնահափառութեան
23. Ասուրայ՝ իմ տեառնս, զանոնք նկուն ըրաւ. վար իջան, ոտքերուս փառուեցան. անոնց վրայ հարկ ու տուրք դրի: Խուբուսկիա քաղաքն⁵ ելայ
24. Ուարտացի Արամիին բերդաքաղաքն Սուգու-նիայի մօտեցայ. քաղաքն վրայ յարձակեցայ, անոր տիրեցի: Անոր զօրքերէն շատերը սպաննեցի
25. կողովաւորն առի տարի. անոր քաղաքին գիմացը կառափներէն կոթող մը շինեցի: Իւր երկրէն 14 քաղաք Տրով պրեցի: Սուգու-նիայէն
26. ելայ, դէպ ի Նաիրիի ծովը վար իջայ. զնքերս ծովուն մէջ մարձեցի. աստուածոցս զոհեր մաստուցի: Նոյն ժամանակ իմ անձինս պատկեր
27. շինեցի, Ասուրայ՝ պերճափայլ տեառն, իմ տեառնս՝ համբաւն եւ իմ կարող զօրութիւնս անոր վրան դրեցի, ծովուն քով կանգնեցի: Երբ կը դառնայի
28. ծովէն, Կիրդանացի Ասուին հարուստ տուրք՝ ձիեր, արջառ, ոչխարներ, գինի, իւրաքանչիւր ողին 2 սապատ ունեցող 2 ուղտ ընդունեցայ
29. իմ քաղաքս Ասուր տարի:

(Հարուն-ի-իւ) ՅՈՂՄՈՒՅ Զ. ՄԱՍԱՍԱՍԻՈՒՆ



ԵՐԿՐԱՆՈՍՍԱԿԱՆ

ԵՐԿՐԱՆՈՍՍԱԿԱՆ ՈՍՏՐԱՎՈՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՓՈՔՐ ԱՍՐԱՅ ՀՐԴԱՐ-ԱՐԵՆԵԼՆԵՆ ԿՈՂՄԸ

(Հարուն-ի-իւ եւ Վեր)

Բուլղար գաղի հարաւային զառիթափին խաւադրական եւ կազմախօսական յարաբերութեանց մերձուստ ծանօթանալու նպատակով՝ զէպ ի լեռ արշաւանք մը կատարեցի, որ զիս Տարսնէն Նէմրուն եւ վերջէն Մերսին տարաւ: Նախ լեռան ենթամիջին-հին խաւին վերաբերող նախաբլուրն եւ Ջէմէլ-էն-Քէֆի հիւսիսէն հարաւ ձգուող գոտին կտրեցինք անցանք:

1 Յայտն է թէ Խուբուսկիայ թագաւորն Նաիրիի եւս թագաւոր կը կոչուէր. յորմէ Խուբուսկիա՝ Նաիրի եւս կ'անուանէր:

2 Աստեւ իմս «Կիրդէն»:

1 Արձանագրութիւնն՝ Ափր. (Տիրպէրէ) քաղաքին հարաւայ արեւելակողմն եւ նոյն քաղաքէն իւր քսան անգղիական մղն քարէ կամ քուրէ կոշտ առ տեղը գտնուած եւ անկէ Երթտանական Թանգարան փոխադրուած է: Այս արձանագրութիւնն թէ պէս սխեմա թագաւորին Նաիրիի եւ Ուարտացի նկատմամբ մի մայն իւր կառավարութեան մինչև շրջորդ (856) տարին գործածները կը պատմէ, սակայն զօրութեան ընդարձակ կերպին միւս արձանագրութիւնները կը զերպանցէ: Տես Յովսէփ Մեհան, Annales des rois d'Assyrie, 1874, էջ 105 եւս հետ. Ա. Ա. Սէյս, Records of the Past, n. 6, հար. Գ. էջ 81 եւ հետ. Եր. Շրատեր. Keil. Bibl. էջ 150-175:

3 Ք. ա. 860:

4 Թուի թէ Կորդէնց մէջ եր այս բերդաքաղաքն, յարեւելակողմն նոյն երկրին:

5 Աղձնեաց հիւսիսայնումը, Թագաթմադաղայայ Ա. Հատուածակողմանց սիւն Բ. 3, 11 տողերին մէջ տեսնուած Սիրիի անուն քաղաքին վնասին: Ցեա անէնք միւս մէկ քանի վնասկաց անունները:

Հատ տեղեր բրածոյց Հատ ճոխ են, բայց ինչպէս միշտ, այստեղ ալ տեսակի կողմէ՝ աղքատ են:

Հագիւ թէ Ուլաշի ետեւէն՝ նեղ անցքի մը մէջէն վազող փամբուք-սուի ձորը կ'իջնաս, առջեւդ կ'իլնէ՝ միջին-Տին կրբու եւ շեղազօգեբրու տակ թէթեմ ծածկուած, բաց դեղին գունով աւազաքարն՝ առանց խոշորացոցային բրածոյից: Աւազաքարը ծալք ծալք է եւ մերթ հիսխիւն Հարաւ, մերթ արեւելքէն արեւմուտք ուղղութիւն ունի եւ կը հակադրի սկախառն մուրէր կազմեալ միջին-Տին խաւերուն, որ հարաւ-արեւելք կը միտեն: Այս աւազաքարին պատկած մասին մէջ՝ Հեղեղատի մը մէջ կապոյտ մասն նստած գտայ: Ինչպէս ամէն տեղ, այստեղ ալ մակերեւութային կրբըր Հատ խորտուած են եւ օդէն կրած ու կարստեան նկարագիր ունին: Գետերն այս ահագին հարթմանակներու մէջ՝ պատուած բացած են իրենց խորունկ ու բոլորովին անանցանելի բազմաթիւ անցքեր, որ այնպէս բնորոշ են այս կրային գոտիներուն համար:

Մանասի ետեւը ճամբան կը տանի լեռան մը կունակէ, որ Զաքմաթեալ (կայծքար) կը կոչուի, լեռն այս անունն առած է իւր կրին մէջ մեծ քանակութեամբ գտնուած կայծքարի մասնակներէն: Դէպ ի Յարըքավաք գարձեալ կը տեսնուին բարակ ու պայծառ աւազաքարեր, որ այստեղ ճոխ անասաբերութիւն մ'ունին՝ բուսականութիւնով կախի, ոտորէ եւ մասնաւորապէս խորթ խողով: Ասոնց տակ կայ կապոյտ մասն՝ մոմաքարով: Բոզմէփէի յաղթ լեռը կը ցուցնէ՝ խաւերուն գէպ ի լեռ խոնարհում մը: Նէմրուէն առջեւ՝ խորունկ կիրճի մը մէջ գտնուեցան գորշագոյն, գրեթէ ուղղահայեաց կցեցած եւ հիւսիսէ հարաւ երկարող կրբեր, որ մանրամասն ուսումնասիրութեան տակն ցոյց պիտի տան իրենց բրածոյից մնացորդները: Նէմրուէն ձորոյն մէջ կը բարձրանայ մեծագործ բերդաւեռ մը, որուն պսակը կը կազմեն Տին հայկական դղեկի մ'աւերակները: Այս լեռն ամէն կողմանէ բարձր ուղղաձիգ ժայռերով մինչեւ վար կ'իջնայ: Ամենէն վրան մութուր կրաքար ու աւազաքար է՝ քաւացած ողնիներով եւ կորաղեղնով: Զորին յատակն կը կազմէ ռուբր, փերուս ու պայծառ աւազաքարը, որուն տակ այլ եւ այլ տեղեր կայ տունի ու անուշ ջրոյ խեցեմորթ բովանդակող գորշագոյն մասն, որ մասնաւորապէս Նէմրուէն ու Զերիլի միջեւ տարածուող սարաւանդին վրայ գետնածոյ ահագին կոյտեր ունի: Գիւղին հա-

րաւարեւմտեան կողմն այլ եւ այլ տեղեր այս խաւը փորձելով՝ տեսայ թէ թանձրութիւնը $1\frac{1}{2}$ մետր է: Ածուխը փայլուն սեւ է, սաստիկ փերուն ու թերթ թերթ եւ քիչ ժամանակի մէջ սեւ ու փշուռ գանգուած մը կ'ըլլայ՝ միմեկ լորտի ազդեցութեանց ենթարկուելով:

Եղալիքներուն կուտակումը Հատ խանգարած է. սակայն Զերիլի քով, փամբուք-չայի ձորոյն եւ Նէմրուէնի հիւսիսակողմը՝ Կալէ-դէրէի մէջ ածուխ գտնուիլը հետեւցնել կու. տայ թէ այս նիւթը բաւական տարածութիւն պիտի ունենայ: Ռուսէգգէր իւր ճանապարհորդութեան մէջ կը յիշէ թէ Իբրահիմ փաշայի լեռնագէտ երկրաւափները թոր-օղուն քով պեղումներ կատարած են քարածուխ գտնելու նպատակաւ եւ նպատակաւոր արգիւնք ստացած չեն: Առած տեղեկութիւններովս ստուգեցի թէ թոր-օղուն — որուն տեղն երկայն ատեն ապարգիւն կերպով փնտռած էի — Զերիլի Տին անունն է. որմէ կը հետեւի թէ այն տաններն իսկ կը կարծէին թէ այս կողմերն քարածուխ գտնուելու է: Անտարակոյս այս ածուխն Ալվարէ-ձորին յիշեալ ածխային կաւին ժամանակէն ըլլալու է. եւ կրնայ ըլլալ որ Զերիլիէ մինչեւ Աքգաղ գլխաւոր շղթային ստորոտը ստորին երրորդական երկրի է. անուշ ջրոյ կազմութեանց գոտի մը տարածուի:

Նէմրուէն Բարանը-դէրէ իջնալով՝ գորշագոյն եւ մոլթ կապոյտ կրաքարեր գտայ, որ հիսխիւն հարաւ ուղղութիւնն ունէին: Այս ձորոյն վերին մասին մէջ, որ Բարանթաք կը կոչուի, սաստիկ փոթորկի մը ստիպեց զմեզ ետ դառնալու՝ մինչեւ հիմայ աշխարհագրօրէն անծանօթ մնացած այն կիրճը չտեսած, զոր տեղացիք կը գործածեն իւրեւ ամէնէն կարճ ճամբայ՝ երկրին ներսերն երթալու:

Աւերին Նիւլանոսի ձորն (Բամբուք-դէրէ) ըրած արշաւանքս պարզեց անշուշտ բարձրալեռանց գիւղական մեծագործ պատկերն ու բաղձանք արթնացոց մըն՝ յարմարագոյն ժամանակ մը՝ այս տակաւին ամբողջապէս անծանօթ երկիրներն այց ելլելով՝ այս ամենաբարձր շղթաներուն կազմութեանն ու խաւագրական յարաբերութեանց ծանօթանալու: Միջին-Տին կրաքարերու միակերպ գոտւոյն մէջէն դէպ ի հարաւ գացելը: Փամբուք-սուի կերուելով յառաջ եկած խորունկ կիրճն անցանք եւ մէկայ կողմը դարձեալ մագլցելով բարձր սարաժաթիւն ելանք: Այստեղ կը տեսնուին Տին քարեր, աւազաքար եւ շեղազօգ, գորշ-կապոյտ կիր, ժանգագոյն կարմիր եւ կապտագոյն-կանաչ եղեւ-

բարբար, թխագոյն մասն եւ հերձաբար՝ գրեթէ հիւսիսէն հարաւ ձգելով եւ դէպ արեւելք սաստիկ խոնարհելով։ Այս ալ հիմնական լեռան պատեհելով դուրս ելած մասն է, ինչպէս որ ուրիշ տեղեր՝ միջին-հին խաւերու սկսիսն միտուի կազմուած զանգուածին տակ տեսնող։

Գեղածիծաղ ու լայն Դէրիմէն-դէրէի մէկալ կողմէ՝ պատռելով դուրս ելելով կազմուած գոտին կը շարունակուի, եւ շատ լաւ կը տեսնուի միջին-հին խաւի խոռնի ի խուռն կուտակումն այլ եւ այլ տեղեր, զ. օ. Եպլաւ Հայվա-դէդիքէ՝ Պանդոր-բայէսի տանող ճամբուն վրայ, ուր ուղղահայեաց դիրք ունեցող գորշագոյն կիրն իւր ընկողմանած մէջտեղ կ'ըլլէ։ Քօսմայի հովիտը դարձեալ հին քարերն երեւան կ'ըլլեն, կրնանք այս գօտւոյն վերջին բազուկները համարիլ իւմէի ժով տեսնուած խանգարուածները, զոր վերջ յիշեցինք Ըստ այսմ կը տեսնուի որ գլխաւոր շղթային ուղղութեանը՝ շեղ դիմող երկու զուգահեռական խանգարման գիծ կայ, այս գծերուն քովն է որ հիմնական լեռները մէջտեղ կ'ըլլեն։ Փոքր Ասիոյ հարաւ-արեւելքին կազմութեանը համար մեծ նշանակութիւն ունին խանգարման այս գիծերն, ինչպէս քիչ մ'ետքը պիտի տեսնուի։

Պիլիկիոյ միջին-հին լեռնադաշտին հիւսիսային մասին ծանօթանալու եւ միանգամայն Ասիոստաւրոսի արեւմտեան շղթային դիրքին վրայ թեթեւ կամ վերիվերոյ ակնարկ մը ձգելու նպատակաւ՝ Առանայէն դէպի հիւսիս արշաւանք մ'ըրի, որ զիս մինչեւ Հաճին տարու։ Այս արշաւանքն ինձ առիթ պիտի տար՝ մասնագիտական մատենագրութեան մէջ բաւական նշանակութիւն ստացած Հուդ կամ Կուդ անուն տեղւոյն այցելելու, զոր 1836ին Ռուսէգգեր գտած էր։ Այնտեղ յիշուած բրածոյից մնացորդներուն նայելով՝ այս տեղւոյն կուտակեալ հողերը՝ մեր երկրորդ միերկրական աստիճանին համաստիճան նկատուեցան, եւ որովհետեւ միջին հիմայ արեւելեան փոքր Ասիայէն ասանկ բան ծանօթ չէ, ուստի յիշեալ տեղը համաւ մը ստացաւ։ Այս տեղւոյն ոչ անշատ — իբր 1100 մետր — բարձրութենէն դատելով՝ հնարաւորութիւն կար Ասիոստաւրոսի բարձրագիւր ձորերուն մէջ այս կուտակեալ հողերուն անդրապոյն հետքեր ալ գտնելու, ուստի գլխաւորաբար մտադրութիւն աստեղ վրայ ուղղած էի։

Առանայէն դէպի հիւսիս ճամբայ ելանք. ձիով մէկ օրւան ճամբայ ընելով եւ նահանգին ամենէն անմիջեմար մէկ մասէն՝ ցած ու մերկ

բլուրներով երկրէ մ'անցնելով հասանք Սաի Գէշիգ։ Բաց գունով, դիւրափեւոր, մասամբ կաւային, աւազաշատ ու բրածոյազուրկ մասնն եւ հարթակոյտ այլ եւ այլ նիւթերը կը կազմեն այս արեւելեան բարձրագոտին, որ աստիճանաւոր ընդարձակ երկիւր մը կը ձեւացընէ՝ սխեմա դաշտէն մինչեւ հեռաւոր լեռանց ստորոտն, որոնց ձինսպատ գագաթներն արեւմտեան հորիզոնէն չեն բաժնուիր։ Այս քարուտ ու շուր գետնին վրայ ծառ մ'ալ չկայ, միայն ցած մնացածներ ու վտիտ խոտեր ողորմելէ կ'ետք մ'ունին։ Հոս հոն միայն կը տեսնուին կարմրագոյն թշու — հաւա-նականագոյն՝ գետային ծագմամբ — շեղւա-զօգեր եւ կարմրահող երկրի մակերեւութային մասունքներ, ապա հովապէս յառաջ եկած՝ յատակին օդէն կերուելով։

Ճիհնիկ եւ անոր բազուկներուն լայնածաւալ դաշտին մէկալ կողմը՝ զգալի կերպով մուլի հաստատութենէն դուրս կը ժայթքեն արեւելեան եղբայրները՝ Դէդէ-դաղ, Ջէքէլ Մսիս եւ Գեաւուր-դաղի հիւսիսային սայրերը՝ մինչեւ Գուլգուլի ձինսպատ գագաթը։ Կամաց կամաց հեռուն երեւան կ'ըլլեն Սաի լեռանց սրածայր բութերն ու իրիկեան դաշտին հիւսիսային եզերքը։ Արեւիկայի մը միջին ճառագայէ եւ Անաւարգա՝ այս երկու մենակաց ժայռալեռները, որ՝ կղզւոյ նման՝ դաշտին ջրատական յատակէն վեր կը ցոլան։

Սաի շրջակայքը դաշտէն յանկարծ բարձրացող լեռը կը բաղկանայ թեթեւ մը դէպի հարաւարեւելք խոնարհող, միջին-հին այլեւայլ նիւթերէ, որոնք այստեղ բոլորովին տարբեր տեսք մ'ունենին։ Բաւական մեծ կրեալ խճաքարերն մեծ մասամբ մուլ-թխագոյն եւ կարմրութուի կիր են. այս կիրը բրածոյով լեցուն է եւ կրնայ դեռնեան շրջանէն ըլլայ։ Այլեւայլ նիւթերէ կազմուած է այս գնդաձեւ ցած կատարներուն շարքը, որ քաղաքին քովէն մինչեւ դաշտի մէջ կը շարունակուի։ Այս գիւղական պատկերին մէջ զգալաւոր դուրս կը ցցուի Սիւ-կալէի ժայռը, որ ամէն կողմանէ կ'ընդացած՝ յանկարծ իբր 350 մետր քաղաքէն վեր կը բարձրանայ։ Գորշ-դեղին եւ տեղ տեղ բիրեղական կրաքարի մը հիւսիսէն հարաւ ձգուող, ուղղահայեաց շեղերն են որ այս վիթխարի լեռը կը կազմեն։ Բրածոներէն այս շեղերուն մէջ միայն ոսպաքարի աննշան հատաններ գտայ։ Հին հայկական դղիկի մ'աւերակները կրող բարձունքէն հեռանկար պատկեր մը կը վայլեն, որ՝ իմ կարծեօքս, երկրին ամենէն բազմաբովանդակ հա-

մայնատեսիներէն մէկն է: Հիստիսակողմը՝ Սոփ հովտին մէկալ գին բազմանգամ միջակ լեռններով երկիր մը կը տարածուի. արեւմտեան կողման վրայ կը տիրէ ձիւնէ գգեստի մէջ շողողազցող Ալա-դաղին, Աբ-դաղի եւ Բուլղար ու Դիւմէէէք-դաղերուն միօրինակ գօտուին սարաշատ գագաթներուն գիծը: Դիւմէէէք լեռան ձիւնապատ լայն գօտին հետեւին հարաւ-արեւմտեան կողմը կ'անհետանայ: Արեւելակողմը կը տարածուին Ամանոս եւ Մոխի լեռը՝ արծաթափայլ Պիւսամոսէն անդին. իսկ ոտիցս առջեւ կը ձգի դաշտը — լայնանիստ ու մերկ տափաստան մը —, որուն փոքրիկ վէտ վէտ ալիքներն աչաց անտեսանելի կը դառնան: Չկայ սահմանագիծ մը, որ նայողին ցուցնէ դաշտին տարածութիւնը զէպ ի հարաւ, ուր դաշտը ծովափին ձախճախուններուն եւ լճակներուն խառնուելով կը կորսուի: Այս դաշտին վրայ կը բարձրանան բազմաթիւ բլրակներ, որ երկրին կազմախօսութեան համար կարեւորութիւն ունին: Աղբոյ նման՝ դաշտագետնէն բարձրացած երկու ձերմակ կրածայրերը՝ Անաւարդ եւ Տումու-կալէ՝ կ'երեւայ թէ ուղղակի շարունակութիւնն են Սիւ-կալէի վիթխարի ժայռին, որ՝ ինչպէս պիտի տեսնենք, իւր մեծամեծ գծերով ծանօթ լեռան անկիւնաքարն է: Անաւարդայի չորայայ պոյն ելլել ողողման մը պատճառաւ, որ անանցանելի էր ըլած դաշտին այս ցած մասը: Տումու-կալէ գրեթէ այն կրաքարերէն բաղկացած է, ինչ կրաքարեր որ բաղկացած է Սիւ-կալէի ժայռը շնչողակոյտերուն ըստ բաւականին որոշ ըլլալուն՝ կարելի չեղաւ խաւրուն ուղղութիւնը ձգել: Թէ այս գծերուն հետ՝ դաշտէն բարձրացող մէկալ լեռները՝ Ենի-կալէի ժայռը, Ատանայի եւ Մոխի միջեւ ձգուած բլուրներուն շղթան եւ Գարմաշի ժայռերը, յարաբերութիւն ունին, կրնայ միայն որոշուիլ, երբ այս տեղերն ալ քննուին այցելութեամբ մը:

Սոփ հիստիսակողմը բաւական տեղ հետեւեցայ Սիւ-կալէի մեծապէս խնդարեալ կրաքարերուն: Ատոր բարձունքները կազմող միջին-հին շնչողակոյտերուն եւ կրերուն տակը ծածկուած են: Քարա-Սիսի քով կը տեսնուին բաց գունով դիւրափափուր, թեթեւակոյտ աազաքարեր, որ Այլփարէի եւ Նէմրուտի նման կազմութիւնները կը սիչեցնեն: Մակերևութիւն վրայ՝ այս աազաքարերը քառակուսի քուէաձեւ կտորներու կերպարանք առած ըլլալով՝ սալայատակի մը երեւոյթն ունին: Ատնց հետ մէկտեղ՝ կայ

այստեղ ալ անկարբեր աազուտ մառն, որ յատկապէս վերոյիշեալ տեղը գետնածխոյ հետքեր կը ցուցնէ: Աազաքարը հիստիսէն հարաւ ուղղութեամբ գօտի մը կազմելով՝ կը շարունակուի իւր 40 քիլոմ. երկայնութեամբ զէպ ի հիստիս մինչեւ Տապաւն: Այս ծամբուն վրայ շատ անգամ տեսայ խաւրու ուղղութեան եւ միտման կամ խոնարհման փոփոխութիւն. կարծեմ թէ այս փոփոխութեան պատճառը կրնան ըլլալ քայքայուող, իրարու տեղն անցնող ծալքերը կամ խաւերը: Մինչ մեծ մասամբ ուղղութիւնն հիւսիս-հիստիսարեւելքէ հարաւ-հարաւարեւմուտք է եւ խաւերն այնպէս ուղղահայեաց կը կենան, որ ժամերով խաւերուն գլխուն վրայէն մարդ կը ձիւմարէ, յանկարծ կուտարի մը կը հարթանայ եւ ուղղութիւնը կը կտրէ կ'անցնի եւ զէպ հիստիս-արեւելք թեթեւ խտորում մը տեղի կ'ունենայ, որմէ ետքը դարձեալ գրեթէ հարաւային ուղղութիւնը տիրող կ'ըլլայ:

Աազաքարին հնութիւնն ունեցող մասեր հետեւին՝ հիստիսակողմն ալ երեւան կ'ելլէ եւ մեծ տարածութիւն կը ստանայ գլխաւորաբար Աբշա-Միուշա ըստուած մեծանիստ ամառնային արօտատեղոյն կոնակը: Այս դիւրափափուր նիւթին մէջ խորունկ, սաստիկ պատուտած հովիտ մը տեսնաւ է — հաւանականագոյն Բերդըն-սուի հովիտը: Բերդըն-սու մէկ բազուկն է Սարոսի եւ այստեղ Գէօք-սու անունը կը կրէ:

Աազաքարի վերոյիշեալ գօտւոյն համար ըստուած հիստիսէն հարաւ ուղղութիւնը կ'երեւայ թէ կ'արժէ նաեւ մերձակայ բլուրներուն շղթային համար ալ, ինչու որ այս ուղղութիւնն ունին՝ ժայռերու տեղ տեղ երեւան ելլող հնագոյն տեսանքները, որոնց մէջն տիրողներն են կարմիր եղնեքաքարն ու բաց գեղնագոյն կրաքարերը: Շրջակայքը գտնուող բլուրները, որ դարձեալ սարահարթի նկարագիր առած ըլլալով՝ ցից ժայռերմբով կ'եզերափակին, կազմուած են միջին-հին կրաքարերէ եւ շնչողակոյտերէ: Այս բլուրներուն երեսը կարտեսան երեւոյթն ունի: Ըստ երեւուածին բրածոյազուրկ, զէպ ի հիստիս խոնարհող կապոյտ մառն կը տեսնուի Տապաւն քով՝ միջին Սարոսի ձորն տանող Բիր-Բէլ անուն կիրճին ոտքը: Մառնի վրայ կը գտնուին միջին-հին այլ եւ այլ նիւթեր:

Ռուսէփգերի տուած տեղեկութեանց նայելով՝ այս կողմին ըլլալու էր շուրջ կամ Ուրդ անուն վերոյիշեալ տեղը: Ինքը կրէ՛ թէ այս տեղն է Տապաւն Գէօկէ տանող ծամբուն վրայ՝ Գէօլէլի մօտերը: Ամէն կողմանէ առած տեղե-

կուլթիանց Տամաձայն՝ Տիմայ ֆեկե-կալէի դիմացը լեռնային առուակի մը վրայ ֆեօլէլի ա-նունով ջաղացք մը կայ, խիչ շուգ անունը բո-լորովին անձանով է: Անկարելի է որ այս անունն ագարակի մը կամ գաղթավայրի մը կամ բնա-կարանի մ'անուն ըլլայ, վասն զի նշանաւոր տե-ղերուն պաշտօնեաներուն հարցուցի եւ գիւղե-րու հասակաւոր բնակիչներէն ալ ոչ ոք կրցաւ ասանկ անուն մը յիշել: Կա մանաւանդ թէ Ցա-պանի մուխթարին հայրը, ութսունն անցած ծե-րունի մը, Երրահիմ ֆաշայի այս կողմերը գալն ու եւրպացի ուղեկիցներ ունենալը պատմեց մեզէ, սակայն անձանով էր իրեն նոյն խնդրական անունը: Ուստի կ'երեւայ թէ արդիւնաւոր բնիչը սխալած է: Թերեւս այս սխալումը մեկ-նուի այն ծանր հիւանդութեամբ, որ զինքն այս տեղ գերեզմանին եզրքը բերաւ: Ուստի սոյն խնդրական տեղը՝ տրուած կարեւորութիւնը բոլորովին անհիմն է: Եւսն տեղւոյն բրածոներէն կը յիշուին՝

- Trochus patulus* Bast.
Ancilluria glaudiformis Lam.
Conus acutangulus Desh.
 „ *antediluvianus* Desh.
 „ *Russeggeri* Hauer.
Mitra scrobiculata Deff.
Pleuromata rotata Brocc.
 „ *turricula* Brocc.
Terebra pertusa Bast.
Buccinum polygonum Brocc.
 „ *prismaticum* Brocc.
Dentalium elephantinum Lam.
 „ *Bouei* Desh.
Pecten aff. flabelliformis Brocc (?)
Ranella marginata Brocc (?)
Venericardia (Cardita) Jouanetti Bast (?).

Ասանց մէջէն վերջին երեքին ուսկից ըլլալն ապահով չըլլալով՝ չեն կոնար նկատողութեան անուիլ: Իսկ մեկաներէն եւ ոչ մին բնորոշ է երկրորդ միջերկրական աստիճանի կուտակմանց համար: Ասով ալ անըզուենի կ'ըլլայ այս տեղւոյն ընծայուած կարեւորութիւնը:

Տապանէն դէպ ի վեր՝ նկարագրող Բիրազ-րէլն (իբր 1500 մետր) ելալը, ուր հին-միջին խաւ գաւալ՝ գրեթէ հորիզոնական գիւղով կու-տակուած: Կիրճին բարձրութենէն Հաճնոյ չըլլա-

կայից լեռներուն հեռատեսիլ պատկերը տե-սանք: Այս լեռները բոլորովին տարբեր տիպ ունին քան հարաւակողման բարձրալեռները: Այստեղ ամէն կողմ կրնուող լեռնագրական ձեւերն են բոլորաձեւ, մեծազանգուած թի-կունքներն ու դարեթաձեւ կատարներն՝ իբր 2400 մետր բարձրութեամբ, ցից զառիթափ-ներով եւ նեղ հովիտներով: Որչափ աչքը կը զօրե, այս լեռնաշխարհը գրեթէ մերկ է եւ տիրող կարմրագոյն քարերուն պատճառաւ՝ միագոյն ու տխուր երեւոյթ մը կ'ընծայէ: Այս երկիրն է Կապուգուլէնի Դեռնեռն եւ Բուռնիյն լեռնաշ-խարհ՝ հակադրութեամբ Կիլիկիոյն, որուն վրայ քիչ մ'եղբք պիտի խօսիմ: Քիրահ-Բէլէ 900 մետր ինչալով՝ հասաւ միջին Սարոս (Սա-ւան), որ խորունկ կիրճի մը մէջէն վազելով կը խորտակէ կ'անցնի լեռանց շղթան, որ հիւսիսէն հարաւ կը ձգի: Ճիշտ Հաճին-սուի — Չաչ-սու — բերեցի թով՝ այս գետն անցանք եւ հիւս-նալի ձորի մը մէջէն դէպ ի հիւսիս դիմելով՝ շարունակեցինք մեր ճամբան՝ Հաճին հասնելու համար: Ամբողջ ճամբուն վրայ լոկ հին ու հնա-կինդանական քարեր տեսայ, այսինքն՝ կուտեալ կապոյտ կրաքար, մուլթ թխագոյն եւ ժանգա-գոյն կարմիր աւազաքար ու կիր, կաւային ու միջագոյն հերձաքար եւ ձեռնակ բիւրեղական կիր՝ կարմրաքարով խառն: Կուտակումը խիստ խանգարած է: Կ'երեւայ թէ ձորը բաժանման գծին ուղղութեամբն է. խաւերը դէպ հարաւ կամ արեւելք կը խոնարհին. շատ անգամ ասոնց կիրքն է ուղղահայեաց, իսկ ուղղութիւնն առ հա-սարակ հիւսիս-հարաւային: Սակայն շատ անգամ արեւմուտքէ արեւելք ուղղութեամբ խոտու-րումներ ալ կրցայ տեսնել, թերեւս ասոնց պատճառն ըլլան իրարու տեղը դրսւող ծալ-բերը: Հաճնոյ թով՝ Արդէն-սուի հարաւային շղթան կը կտրէ. այս գետին կերուելով յա-ռաջ եկած խորունկ կիրճին մէջ՝ կարելի է բա-ժանման դիմն իւր ամբողջութեամբ մէջ տեսնել: Որչափ որ կրցայ զբաղել այս հետազոտութիւն-ներով, որ ինձ յանձնուած պաշտօնին սահ-մանէն դուրս էին, կ'երեւայ թէ կաւերուն կարգը վարէն վեր ասանկ է՝ կապոյտ-սեւ կիր, սեւ հերձաքար, ժանգագոյն թուի կիր ու աւազա-քար՝ բազմաթիւ բրածոներով, եւ կապոյտ կրաքար: Այս խաւերէն ոմանց բրածոյից առա-տուլթիւնն արտաքը կարգի է. գլխաւորաբար լաւ պահուած ու մեծ բազմութեամբ կը գտնուին կորաղուն եւ բազկասն ըսուած կակղամորթներ: Ի մասնաւորի Հաճին, Ֆէքէ եւ Ֆէքէ տանող

1 F. Hauer, Die von Russegger aus Afrika und Asien mitgebrachten Fossilien etc. & Haidingers Berichte über die Mittheilungen von Freunden der Naturwissenschaften in Wien, IV. Bd. 1846.

ճամբուն վրայ Հիւսէնի-Բէկ այն տեղերն են, ուր առատութեամբ բրածոյ կը գտնուի: Եւ որովհետեւ տակաւին հնէախօսական ժողովածոյքս հասած չէ, ստիպուած եմ գոհ ըլլալ մասնաւոր ընելով Չիհաշէֆի բրածոյից պակասաւոր ցանկը, որուն մէջ միշտ իրենք բնորոշ յառաջ եւ բերուին Spirifer Verneuli, Sp. macropterus եւ Cyathophyllum spec. div.

Հաճոնէ հարաւարեւմտեանուղղութեամբ գէպի ֆէճէ ճամբայ ելայ Սառանի վայրենի կիրճէն անցնելով, ուր դեռնեան լեռան ահագին ծաւրերը կը բացուին՝ գեղեցիկ կիսաձեւով մը: Այս կողմերուն կազմախօսական նիւթոյն լուծուած շատ յարգի գործ մը կ'ըլլար, վասն զի կ'երեւայ թէ Անտիտարուսի շղթային խոտորումը հոս գէպի ի Տիսիս-արեւելք է:

Ֆէճէի քով՝ Սառանի հովտին ժայռորմեաւուն վրայ կայ միջին-հին կազմութեան եւ բաց գունով կիրճ խառն ի խառն դիզուած սաստիկ քայքայեալ հնակնդանական խաւերուն վրայ: Ֆէճէի հարաւակողմը սուր ու գեղաճիճաղ լեռնազագաթներու շարք մը կը ձգի, որ կրնայ ժայռերու այն գոտիէն ըլլալ, որմէ որ են ֆէճէ-կալէի հիւսիսէն հարաւ ձգուող ժայռերը: Ֆէճէի Բէլէնքէյ երթալու ատեն կտրեցինք անցանք դեռնեան խաւերու հիւսիսէն հարաւ ձգուող գոտին: Գետերէ-սուի ձորն իջնալու ատեն երեւան կ'ելլեն մուլթ-գորշագոյն եւ թխագոյն հերձաւքայրերու բաժանման կենդրոնն եւ ան կրեր՝ անորոշ ժամանակէ: Բէլէնքէյի եւ կալէդէրէ-սիի քով հերձաքարը դեռնեան խաւի հետ սեպ ծալքեր կը կազմէ: Եւրեքաքանի քով՝ այս հերձաքարն Բեքը ունի: Այս վերջին տեղոյ հարաւակողմը գտնուող բարձունքները պսակուած են բաց գունով հորիզոնական կրորմեայի: Քարերու պէսպիսութիւնն այստեղ անանկ ապշեցուցիչ է որ ձիով շտապեալ անցած աւանակ են ոչ իսկ կրնայի ստորը բնիւրու վրայ մտածել: Աք-Քայալի եւ Խալիէն-Բէլի վրայէն գէպի ի հարաւ յառաջացանք միշտ բրածոյազուրկ քարերու մէջէն անցնելով, որոնց մէջ տիրոջն է միջագոյն հերձաքարը: Ուղղութիւնն է գրեթէ միշտ գէպի ի հիւսիս-հարաւ: Գէպի ի հիւսիս յառաջանալով՝ դարձեալ մտանք բաց գունով աւազաքարի եւ աւազուտ մառնի գոտին, զոր գոտանք Գէդիքլիի քով, եւ որ կ'երկարի մինչեւ Սիս: Սիսէն Ցուսմո-կալէի վրայէն Ատանա դարձայ:

Մայիսի մէջ կատարեցի վերջին արշաւանքս, որուն վախճանն էր Գեղք-սուի հարաւա-

կողմէն մինչեւ երկրին ներսերը տարածուող միջին-հին կուտակութիւններով գաւառն ուսումնասիրել, այս գաւառը կ'անուանեմ արաքեան ծոց:

Մերսինէ ճամբայ ելելով՝ յառաջացայ գէպ արեւմուտք՝ նեղ ծովեզերքին վրայէն, որ ծովուն եւ սեպ բարձրացող լեռներուն միջեւ մինչեւ լամաս սու կ'երկարի: Եզերքէն խկը տեսնես որ երկրին նկարագիրը սարահարթի այն նկարագիրն է, զոր տեսանք Նէսիւռնի եւ Չուքուր-Քէպլէի կողմերը: Այստեղ ալ կը տեսնենք նոյն ուղղաձիգ ժայռամբեր, նոյն կիրճերն եւ մալկերեւութիւն կարստեան նոյն տիպը: Այստեղ ալ լեռան ուղղը կազմուած է այն շեղանկոյտ նիւթներէն, որ ծածկուած են օգէն քայքայեալ թելոյ ու ժանգագոյն տարրներով: Ծովափնեայ դաշտը տեղ տեղ այնպէս նոր է, որ բուսական նութիւնը հազիւ կրցած է հաստատուն արմատ արձակել:

Այստեղ-այսի ձախ եզերքը՝ չորացած կիրճի մը մէջէն վեր բարձրացանք կարստեան ու հորիզոնական կրերու վրայէն եւ հասանք սարահարթին բարձունքը, ուր գետն քանի մը հարիւր ոտք խորունկ ճամբայ բացած է իրեն: Այս լայնածաւալ սարահարթային երկրին միջին բարձրութիւնն է 1000—1100 մետր: Մերկ ու հարթ լեռնադաշտակ մը չէ որ այստեղ մեր գէպը կ'ելլէ, ցած լեռնակիրճները, սրածայր սարերը, կերուելով յառաւ եկած մեծագործ կիրճերը, սեպ որմերով չոր ձորերը, հարթ խոռոչները եւ ջուրը վազցնելու տեղ չունեցող ծործորակներն ու ջրալիւր խորունկ անդունդները գիւղական նկարին թէեւ բաւական պէսպիսութիւն կու տան, սակայն քարերուն եւ բուսականութեան միջինակութիւնը կը յոգեցնէ ուղեւորը, որ օրերով այս կողմերը կը շրջի: Այս բազմաձեւութեան բնորոշ պատճառն է ջուրը վազցնելու տեղ չունեցող խոռոչներուն կազմուիլն: Այս խոռոչներն իրենց տարածութեան համեմատութեամբ ծանեալ են. ասոնց ձեւը մերթ կ'որ է, մերթ ձուռձեւ կամ բլթակաձեւ, իսկ տարածութեան կողմանէ մեծապէս կը տարբերին իրարմէ: Ոմանց տրամագիծը հազիւ 10 մետր է, բայց կան անանկներ ալ, զորոնք մէկ ժամու մէջ կ'որեցնէն անցանք: Ցարակուսելու բան չէ, թէ այս երեւոյթն — որուն համար տեղական խալ յորջորջուը կ'առաջարկեմ — միջնորոպային ջրոց արդիւնք է եւ կրնայ Dolinenի հետ համեմատուիլ: Խոռոչներու աննշան խորանուրթիւնը կրնայ թերեւս մեկնուիլ՝ կրաքարերուն քիչ քայքայեալ

ըլլալով՝ Ծործորակները ծածկուած են կարմրաճողի նման՝ կարմրագոյն եւ բերրի հողով մը, որ այս սահմանափակ գետին վրայ ցորենէն ղինաց մշակութիւնը կարելի կ'ընէ, մինչդեռ շրջակայ կրային գետիկներն մերկ են ու լերկ՝ ըլլալով սաստիկ խորխորած եւ քարերով ծածկուած։

Սարահայրթին ուղղահայեաց կողերը մաղի նման ծակեկած է մատրան նմանող խորշերով, ինչպէս որ Մերսինի քով գտնուող լեռանց վրայ ալ տեսանք։ Գրեթէ ամէն տեղ աւազաշատ մասունքներուն մէջ բրածոյ կը գտնուի։ Սովորականներն են մեծ ոստիկ, կտին եւ քարացած ողնի, որ ընդհանրապէս հնագոյն միջին-հին ժամանակէ են։ Քանի մ'անշան խանգարումները չհաշուելով՝ կուտակուեցնէ հորիզոնական՝ 150 քիլոմետրէ աւելի արեւելեան-արեւմտեան տարածութեամբ։ Քարերուն որպիսութիւնը բիւզ փոփոխութեանց ենթակայ է, ինչպէս պիտի տեսնենք։

Ծովեզերքէն հիւսիս-արեւմտեան ուղղութեամբ յառաջացածք մինչեւ Բէլ-Օլուք, այստեղէն դէպ ի հարաւ-արեւմուտք խտորելով՝ Բըզլը-Գէշիդի քով՝ Լամաս-սու հասանք։ Ուղղաձիգ ու քանի մը հարիւր մետր բարձր ժայռորմերով փակուած նեղ կիրճի մը մէջէն արեւթաց կը հոսէ գետն, որ ամառն ալ ջուր ունի։ Սարահայրթին եզերքէն մինչեւ ձորոյն յատակը՝ հորիզոնական գիրքով իրարու վրայ շարուած են կիրն ու դիւրափխուր եւ աւազուտ մանր։ Ընդարձակ տարածութեան մը վրայ կրցայ տեսնել որ սեպ եզերքներու վրայ կը բարձրանան ուղղահայեաց զառիթափեր։ Քանի մը չոր ձորեր ալ նոյն տեղը կը դիմեն՝ մնալով գետէն այնպիսի բարձր որչափ բարձր որ է ձորին ժայռորմերուն խոնարհեալ մասին՝ սեպ մասին հետ միացած տեղը։ Ես կը կարծեմ թէ այս երեւութիւնն պատճառն է երկրին չափազանց շիտակ ըլլան ու գետերուն ջրոյն առատութիւնը։ Ուրիշ տեղ ասոր վրայ ընդարձակօրէն պիտի խոսիմ։

Լամասի կիրճին մէկալ դին ճամբաս շառունակեցի դէպ ի Ուզունջա Բուրջ, ուր հին Օլբայի շքեղ աւերակներուն այցելեցի։ Մինչեւ հիմայ մակերեւութին քարերուն նկարագիրը շատ միօրինակ էր. յանկարծ փոփոխեցաւ այս նկարագիրն այն ճամբուն վրայ, որ զի Կարա կը տաներ։ Քանի մը ժամ ալ դէպ Օլբայի հիւսիս-արեւմտակողմը յառաջացանք՝ անցնելով զուտ կրէ կարստեան վայրերի ու պատըռ-

տան երկրի մը վրայէն, զոր բազմաթիւ սեպ ու չոր ձորեր կը կարեն, այս ձորերուն միջեւ շատ անգամ լոկ ժայռէ նեղ պատ մը մնացած է. երբ լայնածաւալ հարձ ծործորակն հասանք, զոր կտրելով կ'անցնի Սելեւկիայէ Ղոնիա տանող ճամբան, տիրող դարձաւ դիւրափխուր, աւազուտ կրամանը՝ բրածոյով խառն. այս է պատճառն որ յանկարծ երկրին պատկերին մէջ փոփոխութիւն կը տեսնուի. լեռնագրական սուր ձեւերը կ'անհետանան, եւ երկրին աւելի միօրինակ ու աւելի անմիթիւար երեւոյթ մը կ'առնու։ Լայնանիստ մերկ դաշտերէն ոմանք բարձրօվն ծածկուած են քարերու կտորուանքներով եւ կը կրեն անապատի կատարեալ դրոշմ։

Կարայէ հարաւ-արեւմտեան ուղղութեամբ ճամբայ ելանք դէպ ի Սարքափաք, որ ամէն կողմանէ ժայռորմերով փակուած խորունկ ձորի մը մէջն է. այս ձորն՝ այս կողմերուն կերտելով յառաջ եկած գեղեցկատեսիլ երեւոյթներէն մէկն է։ Այս ձորը գտնուելով երեք կիրճերու միացման տեղը՝ կը նմանի ջրհորի՝ ընկղմած ըլլալով սարահայրթին մէջ իբր 600 մետր խորութեամբ։ Ձիւքը պատող ժայռերը ծածկուած են հիւսնալի այրերով ու խորշերով, որ երբեքն եղած են ընկալաւն ու պապատանաբան, ինչպէս որ վկային մարդկային ձեռակերտներուն մնացորդները։

Կարա-սուի նեղ կիրճին մէջ կը թափի Գէօդէն-սու՝ գալով աշտարակի պէս բարձր որմին մէջ կերտելով բացուած քանի մը մետր լայն ծերպէն, ճիշտ այստեղ ժայռէն առուակ մը կը բղխէ. այսպիսի աղբիւրներ շատ տեսայ այս կողմերը։ Սարքափաքը միջին-հին խաւերու աւազանին ամէնէն բրածոյաշատ մէկ տեղն է։ Քարերը մինչեւ Մուտի հովիտը նոյն կը մնան եւ կ'երեւայ թէ Գէօք-սուէ անդին ալ կը շարունակուին։ Այս լայն գետաձորն ամէն կողմանէ սարահայրթերու ցից զառիթափերով սահմանադրած է եւ կ'ընծայէ ամէնէն խորունկ խաւը՝ գորշագոյն մառն՝ մոմաքարով խառն։ Հին Կալիկաղնոսի ձախակողման եզերքին վրայէն հարաւային ուղղութեամբ ծովափ դարձայ։ Կէմէի քով երեւան կ'ըլլէ հիմնական լեռան մէկ կողքը, որ է սաստիկ խանգարած հերձաքար եւ կամրիւր եղերաքար։ Ուղղութիւնն այստեղ ալ մերձադասպէս հիւսիս-հարաւային է։ Գետը վիպասանական ձորի մը մէջ սարահայրթին դէպ ի ծով խոնարհող եզերքը կը կտրէ եւ Սելեւկիոյ քով կը մտնէ իւր դելտան՝ որ ծովու մէջ քալած է։

Սերեւկիոյ ու լամաս-սուի միջեւ կը ձգի բազմանգամ սեպ ծովափ մը, որ՝ հին ու միջին-դարեան քաղաքներու ու ամրոցներու մնացորդներով ծածկուած՝ ամենէն գրաւիչ ծովեզերքներէն մէկն է։ Այլեւայլ կէտերու վրայ այս ծովափը շատ զարմանալի ջրագրական երևոյթ մը կ'ընծայէ շատ բնորոշ կերպով։ Այս երևոյթն են այն անուշ ջրոյ աղբիւրները, որ եղբրը կամ ծովուն երեսէն վար, կամ ծովուն երեսին բարձրութեամբ ծով կը թափի։ Այս աղբիւրներուն մէջէն ի մասնաւորի մտադրութեան արժանի է Թէքիլի բով կրաւտի մը ստորոտէն ղոկողը։ Իբր 1 մետր տրամագծով, ուղղահայեաց ծակէ մը աղտալարին ջուր մը կը բղեւ այնպիսի ուժգնութեամբ, որ բռնիւթի մեծութեամբ նետուած քարերը դարձեալ գուրս կը մղէ, եւ քանի մը քիլոգրամ ծանրութեամբ քարերն արտաքոյ կարգի դանդաղութեամբ ջրոյ մէջ կ'իջնան։ Ջուրն արտաքոյ կարգի վճիտ է, եւ եթէ եղբրը ծոխ, կրնաս մինչեւ յատակ տեսնել, որ կապոյտ գոյն մ'ունի։ Այստեղ մեր առիշն ելանէ է անուշ ջրոյ յորդ աղբիւր մը, զոր գաշտին յատակի աղի ջուրն հետը կը բերէ։

Թաթլը-սու ըսուած աղբիւրին բով՝ Մերսին տեսող ճամբէն ցից արահայտ մը կը բաժնուի, որ կէս ժամէն կորիկեան այլը կը տանի, ուր ըստ զոռոցին Արամազդ Տիւփան հսկան գերի բռնած կը պահէ։ Բուն կորիկեան այլը կերուելով յառաջ եկած ահագին անգունդ մըն է իբր 280 մետր երկայն, 25 մ. լայն եւ 70 մ. խորունկ, որ ուղղահայեաց, մասամբ կախուած ժայռորմերով չորս կողմանէ փակուած է։ Հիւսիսէն հարաւ երկարող այս այրին հարաւակողմը լայն ական մը կայ, որ 60 մետրէ աւելի հողի մէջ կը մտնէ։ Ժայռորմերուն որպիսութեան նայելով՝ ամենեւին տարակոյտ չկայ որ այս մեծագործ լեռնանցմէջը յառաջ եկած է վաղող անցնող ջրէն։ Քիչ մ'անգին դէպ ի հիւսիս ուրիշ աւելի պզտիկ, բայց շատ աւելի խորունկ ու անմատչելի այլ մ'ալ կայ, որ կ'որէն արամագիծն է իբր 25 մետր, իսկ խորութիւնն իբր երկու հարիւր մետր կը համարիմք։ Քար նետելով չափած ըլլալով։ Այս երկու այրերուն հարաւակողմն երրորդ լեռնանցմէջը մ'ալ կայ, զոր չեմ կրնար մէկաներուն հետ չափել։ Կարծեմ թէ այս մէկ գծի վրայ շառաւած անգունդները, զոր տեղացիք քէնէթ — Դրախտ — կ'անուանեն, յառաջ եկած ըլլալուն են իրենց ուղղութեամբ վաղող, ստորերկրեայ գետի մ'ընթացքէն։ Դէպ Այաւ ուրիշ քէնէթ

մ'ալ կայ, որուն շրջակայքը կը գտնուին հին Կանիստէլիդիս քաղաքին աւերակները։ Կովափնեայ այս գծին վրայ արագ ցամաքանայ մը կը տեսնուի։ Ելեւսա կողմէն այժմ ցամաքին հետ միացած է. նոյն վտանգը կը սպառնայ հին Կրամիստայի ալ. նաւահանգիստներն աւազով լեցուած են եւ Սերաստիոյ նաւամատոյցը հիմայ մասամբ աւազակոյտերով ծածկուած է։

Կովուն երկայնութեանը դէպ ի հիւսիս յառաջանալով՝ Սամաս-սուի մէկալ կողմը հարձեալ Կիլիկեան դաշտային ծովափը հասայ։

Չեմ կրնար այս երկրէն բաժնուիլ՝ առանց մերձաւոր գաւառի մը մակերեսութիւն մէկ կազմակոստեան երեսովը շարժելու, զոր թէեւ աչք տեսած չեմ, սակայն ասոր վրայք վաւերական տեղեկութիւններ կ'ըցած եմ հաւաքել Բաղդադի երկաթուղին նախնական պատրաստութիւններովը զգաղող երկրաչափներուն բերնէն ու ստուերագիւրներէն եւ աշխարհացոյց տախտակներէն։

Այս տեղն է արեւմուտքէն Գեաւուր-գաղի (Վաննոս) եւ արեւելքէն Քուրդ-գաղի մէջ տարածուող ձորը, Քարասուի ձորն ու անոր շարունակութիւնը մինչեւ Մարաշի կողմը։ Ինչպէս որ տրամագրութեանն տակ կողմած աղբիւրներէն կ'ըցայ տեսնել, երկու կողմանէ յիշեալ երկու շղթաներուն զառիթափներէն կը փակուի Անտիքի մօտերէն ուղիղ գծով դէպ ի հիւսիս-հիւսիսարեւելք ընթացող ձորը, որուն լայնութիւնն է 10—20 քիլոմ. եւ երկայնութիւնն իբր 170 քիլոմ.։ Անտիքի հիւսիս-արեւելակողմն, ուր Որոնտէս (Նահր էլ-Ազի) ծոկով դէպ ի ծով կը դառնայ, ճահճային դաշտ մը կայ, զոր Նահր Իֆրին արեւելքէն, իսկ՝Քարա-սու հիւսիսէն պալով՝ իրենց ջրերովը երբեմն կ'ուղղեն եւ անոյային համալուարով վայր մը կ'ընեն։ Քարա-սուի կազմած էլ-Բահրա (Աք-դէնիլ) լիճը դաշտին ամենէն խորունկ տեղը գրաւած է. այս դաշտը դէպ ի հիւսիս գետին երկայնութեանն երկարելով՝ Գոււմդու-օֆայր եւ Շէքէր-օֆայր անունները կ'առնու։ Կիկոպոյտ (Խահալեւա) հիւսիսակողմը՝ Որոնտէս եւ ճիհունի միջեւն է ջրաբաշխը՝ իբր 600 մետր. վերջէն ձորը դէպ ի հիւսիս կը խնարհի միտուով դէպ ի Գեաւուր-Գօզ եւ Ըլգըն-չայ եւ կը հասնի մինչեւ Մարաշ (իբր 37° 30' հիւսիս. լայն.)։ Երկրաչափներուն տարած տեղեկութեանը համեմատ՝ ամբողջ ձորոյն դէպ ի խոնարհ միտումը կը կրէ իւր վրան յայտնապէս

